Համաձայն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 10.11.2023 թվականի որոշման
Գործում է 17.11.2023թվականից

ԱՄIՕ – ՈՍԿԻ

Ոսկու գրավով վարկերի տրամադրման պայմաններն ու սակագները

1.	**Վարկի պայմաններ**					
	Տարբերակներ	**Տարբերակ 1**	**Տարբերակ 2**	**Տարբերակ 3**	**Տարբերակ 4**	**Տարբերակ 5**
1.1	Տարեկան անվանական տոկոսադրույք	15%	15.5%			
1.2	Տարեկան փաստացի տոկոս	16.55% - 23.76%	17.37% - 23. 6%			
1.3	Վարկի մայր գումարի մարման եղանակ	ամենամսյա հավասարաչափ կամ անուիտետային վճարումներ	ժամկետի վերջում	1%-ի ամենամսյա մարում մինչև մարման ժամանակացույցով նախավերջին մարումը, իսկ վարկի գումարի մնացած մասի մարումը՝ ժամկետի վերջում	ժամկետի վերջում	
1.4	Տոկոսի մարման եղանակ	Ամենամսյա մարում			Վարկի տրամադրման պահին	Ժամկետի վերջում
1.5	Մարման ժամկետ	6-60 ամիս	3-12 ամիս	6-36 ամիս	3-12 ամիս	3-6 ամիս
1.6	Վարկ/գրավ հարաբերակցություն	գրավի առարկայի արժեքի 100%-ի չափով, ոսկու ձուլակտոր գրավադնելու դեպքում՝ գրավի առարկայի արժեքի 80%-ի չափով				գրավի առարկայի արժեքի 95%-ի չափով, ոսկու ձուլակտոր գրավադնելու դեպքում՝ գրավի առարկայի արժեքի 75%-ի չափով
1.7	Արժույթ	ՀՀ դրամ				
1.8	Այլ ֆինանսական կազմակերպություններ վարկի գնման պայման	Այլ ֆինանսական կազմակերպություններից				
1.9	Վարկի նվազագույն գումար	30 000 ՀՀ դրամ				
1.10	Վարկի առավելագույն գումար	Տարբերակ 1-ի և Տարբերակ 3-ի դեպքում - 20 000 000 ՀՀ դրամ Տարբերակ 2-ի, Տարբերակ 4-ի և Տարբերակ 5-ի դեպքում – 10 000 000 ՀՀ դրամ				
		1 փոխառուի գծով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում ոսկու գրավով վարկերի հանրագումարը սահմանվում է 20 000 000 ՀՀ դրամ				
1.11	Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ, հաշվի միջոցով				
1.12	Տոկոսագումարների հաշվարկման կարգ	Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ				

1.13	Վարկի վաղաժամկետ մարում	Թույլատրվում է, Տույժեր և տուգանքներ չկան
2.	**Բանկի միջնորդավճար**	
2.1	Վարկի սպասարկման միջնորդավճար /գանձվում է միանվագ վարկի տրամադրման դեպքում/	Տրամադրվող վարկի գումարի 1%
2.2	Վարկային միջոցների կանխիկացում	0%
2.3	Վարկի սպասարկման միջնորդավճար /գանձվում է միանվագ վարկի երկարաձգման դեպքում/	Վարկի երկարաձգվող գումարի 1%
2.4	Բանկային հաշվի բացման վճար	Անվճար
3.	**Ապահովվածություն**	
3.1	Գրավի առարկա	Որպես վարկի վերադարձման ապահովման միջոց գրավ է ընդունվում ոսկյա իրեր և զարդեղեն, ոսկյա ձուլակտորներ: Ոսկյա իրերի գեղարվեստական արժեքը, թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերը, սպիտակ ոսկուց զարդերը և ոսկյա իրերի վրա սպիտակ ոսկուց պատրաստված մասերը չեն գնահատվում և գրավի արժեքի մեջ հաշվի չեն առնվում:
3.2	Գրավադրվող ոսկյա իրերի մեկ գրամի դիմաց տրամադրվող վարկի գումարի չափը ըստ հարգերի	Համաձայն Բանկի կողմից սահմանված չափերի
4.	**Վարկառուի նկատմամբ պահանջներ**	
4.1	Վարկառու	18 տարին լրացած ֆիզիկական անձ
4.2	Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	✓Վարկային պատմության առկայությունը պարտադիր չէ Վարկային պատմության առկայության դեպքում Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող վարկային պարտավորությունները չպետք է լինեն ժամկետանց և դասակարգված հսկվող դասով:
4.3	Վարկառուի եկամուտներ	Չի պահանջվում
5	**Երկարաձգման պայմաններ**	
5.1	Վարկի ժամկետի երկարաձգում	1. Վարկի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև վարկային պայմանագրի ժամկետը լրանալը (ներառյալ) կամ վարկային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո 2. Վարկի երկարաձգումն իրականացվում է երկարաձգման օրվա դրությամբ վարկի մնացորդի չափով: 3. Վարկը պետք է սպասարկված լինի • վարկային պայմանագրով մինչև 12 ամիս մարման ժամկետ ունեցող վարկերի դեպքում ժամկետի առնվազն կեսի չափով • վարկային պայմանագրով 13 ամիս և ավել մարման ժամկետ ունեցող վարկերի դեպքում առնվազն 12 ամիս: 4. Վարկի ժամկետի երկարաձգման դեպքում վարկավորման պայմանները սահմանվում են երկարաձգման օրվա դրությամբ տվյալ վարկատեսակի համար գործող պայմանների համաձայն: 5. Վարկային պայմանագրի ժամկետի երկարաձգումից առաջ վարկառուն պետք է մարի. • մինչև այդ պահը տվյալ վարկի գծով կուտակված ժամկետային և/կամ ժամկետանց տոկոսագումարները և • բոլոր տույժերն ու տուգանքները: 6. Վարկի ժամկետի երկարաձգման պահին վարկառուն չպետք է ունենա գործող անհուսալի դասով դասակարգված վարկային պարտավորություն:
6	**Լրացուցիչ պայմաններ**	

6.1	Դիմում-հայտի մերժումը	• Հաճախորդը չի համապատասխանում Բանկի կողմից սահմանված հետևյալ չափանիշներին. ❖ Վարկարժանության չափանիշներ ❖ Վճարունակության չափանիշներ ❖ Վարկունակության չափանիշներ • Հաճախորդի կողմից որպես գրավ առաջարկվող ոսկյա իրերի հարգն ու արժեքը բավարար չէ պահանջվող վարկի գումարի տրամադրման համար կամ դրանք չեն բավարարում Բանկի կողմից գրավադրվող ոսկյա իրերին ներկայացվող սահմանված չափանիշներին,
6.2	**Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում**	***Մինչ 30.10.2023թ. տրամադրված վարկերի դեպքում՝*** • ***Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով,*** • ***Վարկը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով,*** • ***Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝*** ***1) Տույժ/տուգանքներ*** ***2) Տոկոսագումարներ*** ***3) Մայր գումար*** ***30.10.2023թ.-ից հետո տրամադրված վարկերի դեպքում՝*** ***Բանկն իրավունք ունի՝*** • ***Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակել կիրառել Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:*** • ***Կիրառել տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի և ժամկետանց վարկի նկատմամբ 0.13%-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար:*** • ***Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝*** ***1) Տույժ/տուգանքներ*** ***2) Տոկոսագումարներ*** ***3) Մայր գումար***
		Պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտքի վերաբերյալ տեղեկությունները կուղարկվեն վարկային ռեգիստր և վարկային բյուրո (ԱՔՌԱ): ***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՍ*** **Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել կամ իրացնել այն, ընդ որում իրացումը կատարվում է ոչ ուշ քան ժամկետանց դառնալու 90-րդ օրը**
		Գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում իրացումից ստացված գումարի հաշվին գրավով ապահովված պահանջն ամբողջությամբ չբավարարվելու դեպքում տարբերությունը բռնագանձել վարկառուի այլ գույքից:
6.3	Հաճախորդի այլ ծախսեր	Բացակայում են
6.4	Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	1 աշխատանքային օր
6.5	Վարկի ձևակերպման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր, (բացառությամբ Կումայրի մասնաճյուղի)
6.6	Վարկի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր	• Անձնագիր կամ նույնականացման քարտ • Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից (Բանկի ՀԾ-Բանկ համակարգում գրանցված հաճախորդներից չի պահանջվում) • Այլ ֆինանսական կազմակերպությունից ոսկու գրավով վարկի տեղափոխության դեպքում՝ վարկի մարումը հավաստող փաստաթուղթ • այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

<u>Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագների:</u>

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Ուշադրություն

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԱՅՍՏԵՂ

Տոկոսագումարի հաշվարկման օրինակ.

- վարկի սկզբնական գումար –1,000,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ - 36 ամիս
- տարեկան տոկոսադրույք – 15%
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ – Վարկի գումարի և տոկոսների ամսական մարում

Առաջին ամսվա մարման մեծությունը կկազմի 40,277.00 ՀՀ դրամ

Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև
(կիրառվում է մինչև 2 000 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով վարկերի դեպքում)

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝
i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).
A – տրամադրվող վարկի սկզբնական գումարն է.
n - վարկի մարմանն ուղղված վճարի թիվը.
N - վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.
Kn- վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.
Dn- վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.
i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ:
Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար կարող եք օգտվել Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվակման հաշվիչից http://www.amiobank.am/am/page/Crediting հղումով:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակ.

- վարկի սահմանաչափ - 1,000,000 ՀՀ դրամ
- ժամկետ - 36 ամիս
- տարեկան տոկոսադրույք – 15.5%
- վարկի սպասարկման միջնորդավճար- 10,000 ՀՀ դրամ
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ- վարկի գումարի ամենամսյա հավասարաչափ մարում և հաշվեգրված տոկոսների մարում
-

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է 16,92 %

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՋԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

§ԱՄԻՕ ԲԱՆԿ¦ ՓԲԸ-ն սպառողական վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, նախքան ëå³éáÕ³Ï³Ý վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված §Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները¦ կանոնակարգ 8/05-ի¦:

ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵՋ, ԵՐԱՇԽԱՎՈՐ(ՆԵՐ)ԻՆ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

Ո՞Ձեր ֆինանսական տեղեկատուն համակարգին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ www.fininfo.am:

Ձ՛ԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկի վերաբերյալ տվյալներ.

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն

Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64

Ինտերնետային կայք՝ www.amiobank.am, Էլ. Փոստ՝ info@amiobank.am

Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.

Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: